# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

## ՈՐՈՇՈՒՄ

“07” դեկտեմբերի 2020 թվականի N 324

### *ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳԵՎՈՐԳ ԻՍԱՂՈՒԼՅԱՆԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Արամուս համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 89-Ն որոշումը ` *որոշում եմ.*

1. Անհատ ձեռնարկատեր Գևորգ Իսաղուլյանին Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 4/1/3 հասցեում տալ 4մ$^2$ մակերեսով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն՝ 2020 թվականի հոկտեմբեր ամսվա համար.

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

## ՈՐՈՇՈՒՄ

"07" դեկտեմբերի 2020 թվականի N 325

## *ՀԱԿՈԲ ՄԱՐԳՍՅԱՆԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 4-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Հակոբ Գրիգորի Սարգսյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 78 հասցեում գտնվող 07-013-0055-0018 կադաստրային ծածկագրով հողամասում անասնագոմի ուժեղացման և վերանորոգման նախագծային փաստաթղթեր մշակելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

# ՈՐՈՇՈՒՄ

"08" դեկտեմբերի 2020 թվականի N 326

## *ԳԵՂԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 6-րդ ենթակետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել Գեղամ Ջորիկի Գրիգորյանին Արամուս համայնքի Անկախության 6-րդ փողոց 12 հասցեում գտնվող 07-013-0007-0020 կադաստրային ծածկագրով հողամասի վրա կատարել ավտոտնակի շինարարական աշխատանքներ:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք, Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"10" դեկտեմբերի 2020 թվականի N 327

## *ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՂԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության "Քաղաքացիական օրենսգրքի" 188-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ ու 13-րդ կետերի և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման պահանջները՝ *որոշում եմ.*

1. Արամուս համայնքի Տիգրանածորի խճուղի 42 հասցեում գտնվող քաղաքացի Գեղամ Ժորժիկի Աթանեսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 07-013-0055-0001 կադաստրային ծածկագրով հողամասում (վկայական N 581168) իր կողմից ինքնակամ կառուցված 9.41քմ արտաքին մակերեսով խորդանոցը, 139.04քմ մակերեսով ծածկարանը և 16.63քմ մակերեսով պարիսպները համարել օրինական:

2. Պարտավորեցնել քաղաքացի Գեղամ Ժորժիկի Աթանեսյանին ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար համայնքի բյուջեի N 900105205216 հաշվեհամարին մուծել՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման 13-րդ կետի և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշմամբ հաստատված տարածագնահատման (գոտիականության) գործակիցների՝ խորդանոցի, ծածկարանի և պարիսպների համար՝ 780 (յոթ հարյուր ութսուն) դրամ: Խորդանոցի, ծածկարանի և պարիսպների ընդհանուր արտաքին մակերեսը կազմում է 165.08քմ, որոնց օրինականացման արժեքը կազմում է 128763 (մեկ հարյուր քսանութ հազար յոթ հարյուր վաթսուներեք) դրամ:

3. Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինչպես նաև վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը: Շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ ,պահանջելու իրավունք:

4. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

# ՈՐՈՇՈՒՄ

"10" դեկտեմբերի 2020 թվականի N 328

## *«ԼԵՎՈՒՇ» ՍՊԸ-ԻՆ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ը» ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Արամուս համայնքի ավագանու 2020 թվականի նոյեմբերի 5-ի N 68 որոշումն ու «ԼԵՎՈՒՇ» ՍՊԸ-ի տնօրեն Արամ Հարությունյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 3-րդ նրբանցք 8/1 հասցեում գտնվող, 07-013-0222-0051 կադաստրային ծածկագրով 3,801519 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողամասը առանց մրցույթի, վարձակալությամբ՝ 25 (քսանհինգ) տարի ժամկետով, տարեկան 900000 (ինը հարյուր հազար) դրամ վարձավճարով տրամադրել «ԼԵՎՈՒՇ» ՍՊԸ-ին:

2. Հողամասը տրամադրվում է ընդերքօգտագործման նպատակով:

3. Սույն որոշման պահանջների իրականացման գործընթացի պատասխանատու նշանակել Արամուսի համայնքապետարանի առաջատար մասնագետ Հրայր Սուրենի Վարդանյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք, Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

10" դեկտեմբերի 2020 թվականի N 329

# *ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ *որոշում եմ.*

1. Արամուս համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականությունհանդիսացող հողամասերը հրապարակային սակարկություններով/աճուրդներով օտարման նպատակով ստեղծել հրապարակային սակարկությունների աճուրդների կազմակերպման և անցկացման հանձնաժողով հետևյալ կազմով՝

1)Գեղամյան Տիգրան /համայնքի ղեկավարի ժ/պ/-աճուրդավար

2)Եղիազարյան Կարինե /գործավար/-արձանագրող

3)Վարդանյան Հրաչյա /համայնքապետարանի առաջատար մասնագետ/-հանձնաժողովի անդամ

4)Ղազարյան Վոլոդյա /համայնքի ղեկավարի տեղակալ/-հանձնաժողովի անդամ

5)Հակոբյան Տիգրան /համայնքապետարանի 1-ին կարգի մասնագետ/-հանձնաժողովի անդամ

6)Վարդանյան Զաքարիա/ավագանու անդամ/- հանձնաժողովի անդամ

7)Հովակիմյան Վահրամ/ավագանու անդամ/- հանձնաժողովի անդամ

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

# ՈՐՈՇՈՒՄ

"15" դեկտեմբերի 2020 թվականի N 330

## *«ՆԻԿՎԻՆ» ՍՊԸ-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Արամուս համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 89-Ն որոշումը ` *որոշում եմ.*

1. "ՆԻԿՎԻՆ" ՍՊԸ-ին Ազատամարտիկների խճուղի 43/1 հասցեում՝ 921քմ քարե շինության ներսում, տալ ոգելից խմիչքի արտադրանքի վաճառքի և հանրային սննդի կազմակերպման ու իրացման թույլտվություն՝ 2020 թվականի չորրորդ եռամսյակի համար՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

# ՈՐՈՇՈՒՄ

“15” դեկտեմբերի 2020 թվականի N 331

## ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացի Արտյոմ Եղիազարյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Արամուս համայնքի Ազատամարտիկների խճուղի 20/1 հասցեում գտնվող, Արտյոմ Լյովայի Եղիազարյանին սեփականության իրավունքով պատկանող, 07-013-0033-0016 կադաստրային ծածկագրով (վկայական N 09122020-07-0060) 0.0075 հա բնակավայրերի նշանակության այլ հողատեսքի գործառնական նշանակությունը փոփոխել՝ բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասի՝ համաձայն Արամուս համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի:
2. Հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել ընթացիկ տարվա հողային հաշվեկշռում:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք, Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

“15” դեկտեմբերի 2020 թվականի N 332

## *ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության ''Քաղաքացիական օրենսգրքի'' 188-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ ու 13-րդ կետերի և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման պահանջները՝ *որոշում եմ.*

1. Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 48 հասցեում գտնվող, քաղաքացի Արամ Լյովայի Եղիազարյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 07-013-0055-0004 կադաստրային ծածկագրով հողամասում (վկայական N 04022015-07-0049) իր կողմից ինքնակամ կառուցված 187,46քմ արտաքին մակերեսով բնակելի տունը համարել օրինական:

2.Պարտավորեցնել քաղաքացի Արամ Լյովայի Եղիազարյանին ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար համայնքի բյուջեի N 900105205216 հաշվեհամարին մուծել՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման 13-րդ կետի և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշմամբ հաստատված տարածագնահատման (գոտիականության) գործակիցների՝ բնակելի տան մեկ քառակուսի մետրի համար 1300 (մեկ հազար երեք հարյուր) դրամ: Բնակելի տան ընդհանուր արտաքին մակերեսը 187,46քմ է, որի օրինականացման արժեքը կազմում է 243698 (երկու հարյուր քառասուներեք հազար վեց հարյուր իննսունութ) դրամ:

3. Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինչպես նաև վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը: Շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ　　　　　　　　　　ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՄՈՒՍ ԾՈՒՌ ԿՈՏԱՅՔԻ ՀՀ *035021691

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք, Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

# ՈՐՈՇՈՒՄ

"16" դեկտեմբերի 2020 թվականի N 333

## *ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի $14^3$-րդ հոդվածի 12-րդ մասի, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ ու 13-րդ կետերի, 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 16-ի N 59 որոշումը ու քաղաքացի Նորայր Մակարյանի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Արամուս համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Նորայր Նորիկի Մակարյանին սեփականության իրավունքով պատկանող 07-013-0128-0026 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 0.1559 հա հողամասից (համաձայն «Աշոտ Հակոբյան» Ա/Ձ-ի կողմից տրամադրված հատակագծի) 0.03819 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերի:
2. Արամուս համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Նորայր Նորիկի Մակարյանին սեփականության իրավունքով պատկանող 07-013-0128-0026 կադաստրային ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Արամուս համայնք Ազատամարտիկների խճուղի 47:
3. Արամուս համայնքի Ազատամարտիկների խճուղի 47 հասցեում գտնվող Նորայր Նորիկի Մակարյանին սեփականության իրավունքով պատկանող 07-013-0128-0026 կադաստրային ծածկագրով 0.03819 հա հողամասում ինքնակամ կառուցված 172,17քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 15,43քմ մակերեսով ծածկարանը և 7,05քմ մակերեսով պարիսպը համարել օրինական:
4. Սահմանել, որ հողամասի սեփականատերը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Արամուս համայնքի բյուջեի N 900105205174 հաշվին պետք է վճարի հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 389921 (երեք հարյուր ութսունինը հազար ինը հարյուր քսանմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ, N 900105205216 հաշվին՝ 241356(երկու հարյուր քառասունմեկ հազար երեք հարյուր հիսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ՝ ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման վճար:
5. Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինչպես նաև վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը: Շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
6. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում սահմանված վճարները չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
7. Սույն որոմման 1-ին կետում նշված հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:
8. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

# ՈՐՈՇՈՒՄ

“16” դեկտեմբերի 2020 թվականի N 334

## *“ԱՎԱԼՈՆ ՀՈԹԵԼ” ՍՊԸ-ԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԻՐԱՑՄԱՆ ԵՎ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Արամուս համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 89-Ն որոշումը՝ *որոշում եմ.*

1. “ԱՎԱԼՈՆ ՀՈԹԵԼ” ՍՊԸ-ին Անկախության 1-ին փողոց 5/1 հասցեում՝ 435քմ հիմնական շինության ներսում, տալ հանրային սննդի կազմակերպման ու իրացման և ոգելից խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ 2020 թվականի չորրորդ եռամսյակի համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

## ՈՐՈՇՈՒՄ

"17" դեկտեմբերի 2020 թվականի N 335

## *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և "Նորմատիվ իրավական ակտերի մասին" օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով ու հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2020 թվականի օգոստոսի 26-ի N 325-Ա որոշումը և Արամուս համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 1-ի N 78 որոշումը՝ *որոշում եմ.*

1. Ստեղծել Արամուսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողով հետևյալ կազմով՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Տիգրան Գեղամյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | |
| 1) Ավագանու անդամներ՝ | Զաքարիա Վարդանյան<br>Գեղամ Սողոմոնյան<br>Միեր Համբարձումյան |
| 2) Մարզպետարանի ներկայացուցիչներ՝ | Հարություն Ալեքսանյան<br>Ռոբերտ Թումոյան<br>Արտավազդ Բարսեղյան |

2. Ուժը կորցրած ճանաչել Արամուս համայնքի ղեկավարի 2013 թվականի մայիսի 20-ի «Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողով ստեղծելու մասին» N 84 որոշումը՝ իր հետագա փոփոխություններով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

# ՈՐՈՇՈՒՄ

"18" դեկտեմբերի 2020 թվականի N 336

## *ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ գլխի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 8/9 հասցեում գտնվող 07-013-0136-0011 կադաստրային ծածկագրով և Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 8/10 հասցեում գտնվող 07-013-0136-0012 կադաստրային ծածկագրով հողամասերը բաժանել մասերի /համաձայն հատակագծերի/, առանձնացված հատված S1 և առանձնացված հատված S2.

1) Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 8/9 հասցեում գտնվող 07-013-0136-0011 կադաստրային ծածկագրով 0.09134հա հողմասի առանձնացված հատվածի՝ S1-ի, 0.0737հա հողամասի հասցե տրամադրել՝ Կոտայքի մարզի Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 8/9 հասցեն, իսկ առանձնացված հատվածի՝ S2-ի, 0.01764հա հողամասի հասցե տրամադրել Կոտայքի մարզի Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 8/9/1 հասցեն:

2) Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 8/10 հասցեում գտնվող 07-013-0136-0012 կադաստրային ծածկագրով 0.09574հա հողմասի առանձնացված հատվածի՝ S1-ի, 0.07754հա հողամասի հասցե տրամադրել՝ Կոտայքի մարզի Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 8/10 հասցեն, իսկ առանձնացված հատվածի՝ S2-ի, 0.0182հա հողամասի հասցե տրամադրել Կոտայքի մարզի Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 8/10/1 հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք, Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

# ՈՐՈՇՈՒՄ

"21" դեկտեմբերի 2020 թվականի N 337

## *ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14$^{3}$-րդ հոդվածի 12-րդ մասի, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 16-ի N 59 որոշումը՝ *որոշում եմ.*

1. Արամուս համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականության հանդիսացող 07-013-0101-ից կադաստրային ծածկագրով 0.052 հա հողամասի նպատակային նշանակությունը (համաձայն «Աշոտ Հակոբյան» Ա/Ձ-ի կողմից տրամադրված հատակագծի) փոխադրել բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողերի:
2. Արամուս համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականության հանդիսացող 07-013-0101-ից կադաստրային ծածկագրով 0.052 հա հողամասի նպատակային նշանակությունը (համաձայն «Աշոտ Հակոբյան» Ա/Ձ-ի կողմից տրամադրված հատակագծի) փոխադրել բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողերի:
3. Արամուս համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 07-013-0101-ից կադաստրային ծածկագրով 0.052 հա հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Արամուս համայնք Տիգրանաձորի խճուղի 1/1/3:
4. Արամուս համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 07-013-0101-ից կադաստրային ծածկագրով 0.052 հա հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Արամուս համայնք Տիգրանաձորի խճուղի 1/1/3/4:
5. Սույն որոմման 1-ին կետում նշված հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հավշվեկշռում:
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ　　　　ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

# ՈՐՈՇՈՒՄ

"21" դեկտեմբերի 2020 թվականի N 338

## *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ գլխի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Արամուս համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 07-013-0155-ից կադաստրային ծածկագրով 0.83877 հա հողամասի հասցե համարել Կոտայքի մարզի Արամուս համայնքի Տիգրանածորի խճուղի 3-րդ նրբանցք 4/2 հասցեն:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ *03502169*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

## ՈՐՈՇՈՒՄ

"21" դեկտեմբերի 2020 թվականի N 339

## *ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի և հիմք ընդունելով Արամուս համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 16-ի N 59 որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Արամուս համայնքի Տիգրանաձորի խճուղի 3-րդ նրբանցք 4/2 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 07-013-0155-ից կադաստրային ծածկագրով 0.83877 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների՝ ընդերքօգտագործման հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել՝ արդյունաբերական օբյեկտների:

2. Հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել ընթացիկ տարվա հողային հաշվեկշռում:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

# ՈՐՈՇՈՒՄ

"21" դեկտեմբերի 2020 թվականի N 340

## *ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ԱՆԱՀԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԵՎ ՍԱՐԳԻՍ ԲԱԲԱՅԱՆԻ ՈՒՍՄԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Համայնքի բյուջեով նախատեսված 4729 հոդվածի սոց. ծախսերից 50000/հիսուն հազար/ դրամը փոխանցել "Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ" ՊՈԱԿ-ին՝ Անահիտ Արթուրի Թադևոսյանի ուսման արժեք:
2. Համայնքի բյուջեով նախատեսված 4729 հոդվածի սոց. ծախսերից 50000/հիսուն հազար/ դրամը փոխանցել "Մ. Հերացու անվան ՀՊԲՀ" ՊՈԱԿ-ին՝ Սարգիս Վահագնի Բաբայանի ուսման արժեք:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք, Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

"21" դեկտեմբերի 2020 թվականի N 341

## *ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՎԱՍԻԼ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության "Քաղաքացիական օրենսգրքի" 188-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ մասի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ ու 13-րդ կետերի և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման պահանջները՝ *որոշում եմ.*

1. Արամուս համայնքի Տիգարանաձորի խճուղի 4-րդ փակուղի 1 հասցեում գտնվող, քաղաքացի Վասիլ Գեղամի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող 07-013-0029-0003 կադաստրային ծածկագրով հողամասում (վկայական N 26092018-07-0089) իր կողմից ինքնակամ կառուցված 90,26քմ արտաքին մակերեսով բնակելի տունը և 23,1քմ մակերեսով ծածկը՝ համարել օրինական:

2. Պարտավորեցնել քաղաքացի Վասիլ Գեղամի Առաքելյանին ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար համայնքի բյուջեի N 900105205216 հաշվեհամարին մուծել՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման 13-րդ կետի և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշմամբ հաստատված տարածագնահատման (գոտիականության) գործակիցների՝ բնակելի տան մեկ քառակուսի մետրի համար 1300 (մեկ հազար երեք հարյուր) դրամ, իսկ ծածկի համար՝ 780 (յոթ հարյուր ութսուն) դրամ: Բնակելի տան ընդհանուր արտաքին մակերեսը 90,26քմ է, որի օրինականացման արժեքը կազմում է 117338 (մեկ հարյուր տասնյոթ հազար երեք հարյուր երեսունութ) դրամ, իսկ ծածկի մակերեսը կազմում է 23,1քմ, որի օրինականացման արժեքը կազմում է 18018 (տասնութ հազար տասնութ) դրամ:

3. Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինչպես նաև վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը: Շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք, Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

ՈՐՈՇՈՒՄ

“22” դեկտեմբերի 2020 թվականի N 342

## *ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՎ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՆՎԵՐՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 46-րդ հոդվածի պահանջներով՝ *որոշում եմ.*

1. Արամուս համայնքի նախակրթարան և «Խատուտիկ» զարգացման կենտրոն հաճախող երեխաներին ամանորյա նվերներ հատկացնելու նպատակով համայնքի բյուջեից տրամադրել 55000 /հիսունհինգ հազար/ դրամ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արամուս համայնք
Կենտրոնական փողոց 17, հեռ. (+374 222) 6 01 57

## ՈՐՈՇՈՒՄ

"23" դեկտեմբերի 2020 թվականի N 343

## *ՀԱՄԱՅՆՔԻ 1-ԻՆ ԿԱՐԳԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Արամուս համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 90 որոշումը՝ *որոշում եմ.*

